ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

(Միանավ բազիլիկների օրինակով)

Մ. Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ

Հայաստանի և հարևան երկրների, առաջին հերթին Բյուզանդիայի ճարտարապետական փոխհարաբերությունները նոր թեմա չէ։ Այս բ-արդ ու կարևոր հարցը միշտ շոշափվել է ինչպես բյուզանդական, այնպես էլ հայկական ճարտարապետություններին նվիրված ընդհանուր բնույթի աշխատանքներում։ Սակայն, քննարկելով այդ խնդիրը, մասնագետները որպես կանոն անդրադարձել են գմբեթավոր հուշարձաններին և որոշ չափով՝ եռանավ բազիլիկներին, մինչդեռ եկեղեցական շենքերի այնպիսի կարևոր մի տիպ, ինչպիսին միանավ բազիլիկներն են, դուրս է մնացել նրանց հետաքրքրության շրջանակներից։ Ճիշտ է, խոսվել է և այդ տիպի մասին, բայց հարևանցի։ Այնինչ միանավ բազիլիկները քրիստոնեական կրոնի պաշտամունքային շենքերի եթե ոչ ամենահին, ապա ինքնուրույն տիպերից մեկն են հանդիսանում։ Այդ կոմպոզիցիան իր պարզության և շինարարության համար առավել մատչելի լինելու շնորհիվ եկեղեցական շենքերի տիպերի մեջ ամենակենսունակը եղավ. օրինակ Հայաստանում այն կիրառվել է IV դարի սկզբից մինչև XX դարը։ Վաղ միջնադարում հայկական միանավ եկեղեցիները, թեպետ էական ազդեցություն չունեին ողջ ճարտարապետության զարգացման ընթացքի վրա, սակայն աչքի էին ընկնում գմբեթավոր շենքերից և եռանավ բազիլիկներից անկախ ճարտարապետական-դեղարվեստական կերպարի մշակման ինքնուրույնությամբ։

Հայաստանի միանավ բազիլիկները բաժանվում են երեք ենթատիպի՝ պատերի ուղղանկյան պարագծի մեջ ներգծված աբսիդով, դուրս եկող աբսիդով և արտաքին սրահով։ Կոմպոզիցիոն այս սակավաթիվ տարբերակները հանդիպում են վաղ քրիստոնեական ճարտարապետության մեջ ընդհանրապես և Հայաստանին հարևան երկրներ Սիրիայում, Կապադովկիայում, Վրաստանում՝ մասնավորապես։

Հայկական միանավ եկեղեցիներն իրենց ճարտարապետությամբ սերտ առնչություն ունեն հատկապես IV—VI դդ. ասորական նույնատիպ կառույցների հետ։ Հայկական շինարարական արվեստում մինչև VI դարն առկա է ասորական ճարտարապետական և գեղարվեստական որոշ ձևերի ազդեցությունը, որը հիմնականում արտահայտվում է միանավ եկեղեցիների ու եռանավ բազիլիկների, հատկապես Երերույքի ճարտարապետության մեջ։ Այդ երևույթն ունի մի շարք պատճառներ, որոնցից առաջնայինը այդ հարցը քննարկած գիտնականները (Ն. Մառ, Հ. Օրբելի, Ա. Յակոբսոն, Ա. Խաչատրյան և ուրիշներ) համարում են այն փաստը, որ քրիստոնեական կրոնը Հայաստան է ներթափանցել Ասորիքից և մինչև VI դարը գոյություն են ունեցել հայ-ասորական սերտ կրոնական կապեր, թեպետ և Եփեսոսի 431 թ. տիեզերական ժողովում հայկական եկեղեցին խզեց իր կապերը նեստորականության հետ։ Հայ-ասորական ճարտարապետական կապերին նպաստել են նաև երկու երկրների բնական պայմանների և շինանյութի ընդհանրությունը, պատի շարվածքի, շինարարական այլ կոնստրուկցիաների միևնույն ձևերը, քարգործ վարպետների շրջիկ արտելների գոյությունը (Ա. Յակոբսոն)։ Օրինակ, ենթադրվում է ասորական այսպիսի արտելի մասնակցությունը Երերույքի բազիլիկայի շինարարությանը։ Զգալի է ընդհանրությունը հայկա-

կան և ասորական վաղագույն եկեղեցիների դեկորատիվ հարդարանքում (քիվի, լուսամուտների երեսակալների, մուտքերի ձևավորման մեջ)։ Սակայն, իմ կարծիքով, հայ-ասորական ճարտարապետական ընդհանրությունների առաջնային պատճառը պետք է համարել այս երկու դեղարվեստական դպրոցների ընդհանուր հիմքը՝ հելլենիստական արվեստը։

Հայ մշակույթի պատմության մեջ միշտ չափազանց կարևոր դեր է խաղացել երկրի աշխարհագրական դիրքը՝ Արևելքի և Արևմուտքի միջև, որով և պայմանավորվել է միջազգային առևտրում Հայաստանի ակտիվ մասնակցությունը։ Հին Աշխարհի, իսկ հետո՝ հելլենիստական պետությունների հետ ունեցած սերտ տնտեսական ու քաղաքական կապերը բերել են իրենց հետ նաև սերտ առնչություններ մշակույթի բնագավառում, որը զգալի հարբստացրել է հայկական արվեստը։ Հետևաբար ճիշտ չէ հելլենիզմի դերը ժխտելու փորձը՝ հայ ճարտարապետության և արվեստի անկախությունն ընդգծելու նպատակով։ Հենց այն փաստը, որ հայկական մշակույթը, անցնելով «հելլենիստական փուլը», կարողացավ հետագայում՝ VI—VII դդ. գտնել զարգացման սեփական ուղիները, խոսում է նրա իսկական ինքնատիպության մասին (Ն. Տոկարսկի)։

Հայկական և ասորական միանավ եկեղեցիների համեմատական վերլուծությունը վեր է հանում ընդհանրությունները հատկապես արտաքին սրահ ունեցող եկեղեցիներում։ Հայաստանում սրահով միանավ բազիլիկներ կառուցվել են IV դարից սկսած մինչև VI դարի վերջին քառորդը։ VI դարից հետո սրահով եկեղեցիներ Հայաստանում այլևս չեն հանդիպում։ Հայկական եկեղեցիների արտաքին սրահները, որոնք հաճախ առանձին ոչ մեծ աբսիդ ունեն, ծառայել են մի քանի նպատակների համար։ Խոշոր տոների, հանդիսությունների ժամանակ նրանք եղել են լրացուցիչ, օժանդակ տարածություն՝ հավաքված մեծ ամբոխին պատսպարելու համար։ Ենթադրվում է, որ ինչպես ասորական եկեղեցիներում, Հայաստանում ևս սովորական օրերին ծիսակատարությունների համար օգտագործվել են միայն սրահները։ Սյունասրահները վաղ միջնադարում Հայաստանում նախատեսված են եղել նաև ապաշխարողների համար։ Վաղագույն՝ IV—V դդ. հայկական միանավ սրահով եկեղեցիներից հայտնի են Էջմիածնի, Գառնիի, Կառնուտի, Եղվարդի, Թանահատի հուշարձանները։ VI դարում սրահով միանավ բազիլիկները հատկապես մեծ տարածում ստացան պատմական Հայաստանի Գուգարք նահանգի Տաշիր գավառում։ Այստեղ մենք հանդիպում ենք վաղ միջնադարյան տեղական ճարտարապետական մի հետաքրքրական դպրոցի, որի ստեղծագործությունները (Կուրթան, Ջգրուշեն, Օձուն, Գյուլագարակ, Կողբ, Հոբարձի և այլն) իրենց որոշ ձևերով և հարդարանքով կապող օղակ հանդիսացան Հայաստանի IV—V դդ. արվեստի և VII դարի դասական ճարտարապետության միջև։

Ինչպես սրահով, այնպես էլ արտաքուստ շեշտված աբսիդով և ներգծված աբսիդով հայկական միանավ եկեղեցիները իրենց անմիջական զուգահեռներն ունեն հատկապես Հյուսիսային Ասորիքում։ Այստեղ IV—VI դդ. լայնորեն տարածված էին միանավ բազիլիկների այն բոլոր տարբերակները, որոնք կիրառվել են Հայաստանում, ինչպես, օրինակ, արտաքին պատերի մեջ ներառված աբսիդով (Բաուդ, IV դար, Բարդհան, VI դար), արտաքուստ շեշտված աբսիդով (Խարաբ Շամս, VI դար), սրահով, ներգծված աբսիդով (Քերքբիզե, IV դար), ներգծված աբսիդով, նրան կից օժանդակ սենյակներով (Ռբեյա), երկու կողմից սրահով (Դեյր Սիման, VI դար), երեք կողմից սրահով շրջապատված (Քեֆեր Ֆինչե, VI դար) և այլն։

Ասորական և հայկական եկեղեցիներն ընդհանրություններ ունեն ոչ միայն հատակագծային-ծավալային լուծումների մեջ, այլև դեկորում և արտահայտչական միջոցներում ու համաչափություններում։ Այսպես, օրինակ, հայկական միանավ եկեղեցիների համաչափությունները (լայնության և եր-

կարության հարաբերությունը) տատանվում է նույն սահմաններում, ինչ բնորոշ է ասորականներին (1:1,15-ից մինչև 1:2,3)։

Սակայն միանավ եկեղեցիների ճարտարապետության զարգացումը Հայաստանում և Ասորիքում ունի իր տեղական և էական առանձնահատկությունները։ Այս երկու հարևան և կրոնական ու ճարտարապետական սերտ կապեր ունեցող երկրներում նախապատվություն են տվել միանավ եկեղեցիների տարբեր ենթատիպերի ու տարբերակների։ Այսպես. Ասորիքում լայնորեն կիրառվել են միանավ եկեղեցիներ ուղղանկյուն աբսիդով՝ ինչպես ուղղանկյուն պատերի մեջ ներգծված (Քասր Իբլիզու, VI դար), այնպես էլ արտաքուստ շեշտված (Սիտ էր Ռում, VI դար)։ Ուղղանկյուն աբսիդ կիրառվել է նաև սրահով կառույցներում (Բանաքֆուր, V դար, Սերժիլլ, VI դար և այլն)։ Ասորիքում կառուցվել են նաև սրահով միանավ եկեղեցիներ արտաքուստ շեշտված աբսիդով։ Այս բոլոր տարբերակները հայկական ճարտարապետության մեջ չեն հանդիպում։ Ասորական միանավ եկեղեցիներն ունեն այնպիսի տարրեր, որոնք անծանոթ են Հայաստանում։ Դրանք են իկոնոստասը, «բեման» (աղոթասրահի կենտրոնում դրված կիսաշրջանաձև աստիճաններով գահավորակը), աբսիդին կից մարտիրիոնը և մկրտարանը, աբսիդի սյուներով ծածկը։ Միևնույն ժամանակ ասորական միանավ եկեղեցիներին բնորոշ չեն աբսիդով սրահները, արտաքուստ բազմանիստ աբսիդները, պաստոֆորիաներում կիսաշրջանաձև աբսիդները, որոնք, ընդհակառակը, հատուկ են հայկական նույնատիպ հուշարձաններին։ Տարբեր է նաև ասորական և հայկական վաղ միջնադարի միանավ բազիլիկների տեղադրության հարցը. եթե Հյուսիսային Ասորիքում միանավ եկեղեցիները կազմում են բնակելի կառուցապատման բաղկացուցիչ մասը (հետագայում է, որ նրանք մոնումենտալ բնույթ են ստանում), ապա Հայաստանում այդ եկեղեցիներն ազատ են կանգնած։ Ասորական սրահով միանավ բազիլիկների հիմնական մոտեցումը հարավից է, որտեղից և կցվում է սրահը։ Նրանք նույնիսկ մուտք չունեն ոչ միայն հյուսիսից, այլև արևմուտքից և նրանց դռները բացվում են միայն հարավից։ Անցումը ընդլայնականից եկեղեցիների հորինվածքի երկայնական տիպին Ասորիքում տեղի է ունեցել V դարից հետո։ Մինչդեռ հայկական նույնատիպ կառույցները սկզբից ևեթ ունեցել են երկայնական կոմպոզիցիա, այսինքն պատկանել են հելլենիստական տիպին (Յ. Ստրժիգովսկի), շեշտված արևելք-արևմուտք առանցքով, հիմնական մուտքն ունենալով արևմուտքից։

Այս էական տիպաբանական տարբերությունն ունի ծագումնաբանական արմատներ։ Հյուսիսային Ասորիքի միանավ բազիլիկների ձևերի զգալի նմանությունը բնակելի տանը հիմք է ծառայել այն տեսակետին, որ եկեղեցու այս տեղական պարզ տիպը ստեղծվել է բնակելի ճարտարապետության, ինչպես նաև անդրոնի (հավաքույթների դահլիճ) ազդեցությամբ (Գ. Ջալենկո)։ Իսկ հայկական վաղ միջնադարյան միանավ եկեղեցիները սերտորեն կապվում են նախաքրիստոնեական Հայաստանի պաշտամունքային կառուցվածքների հորինվածքների հետ։

Հայ-բյուզանդական ճարտարապետական կապերը քննելիս մասնագետները հիմնականում հետաքրքրել են (ասորական զուգահեռներից բացի) կոստանդնուպոլսյան դպրոցի հետ ունեցած հայկական առնչությունները, անտեսելով Կապադովկիայի վաղքրիստոնեական ճարտարապետությունը։ Այնինչ, իմ կարծիքով, առաջին հերթին պետք է ուսումնասիրվեր Հայաստանին արևմուտքից անմիջական հարևան այս երկրամասի արվեստի ու ճարտարապետության հետ հայկական շինարարական արվեստի ունեցած կապերը, որոնք ավելի խոր կրոնական և պատմական հիմք ունեն, քան նույնիսկ հայ- ասորական մշակութային առնչությունները։

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը, շարադրելով հայ եկեղեցու պատ-

մությունը, նշում է, որ Կեսարիայի դպրոցը մեծ աղդեցություն է ունեցել III դարի հայ քրիստոնեության վրա և մրցակցել է այդ ընդավառում Եդեսիայի հետ։

Հայաստանում IV դարի առաջին տարիներին քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակած Տրդատ III թագավորի և հայ առաջին կաթողիկոս-պատրիարք Գրիգոր Պարթևի (Լուսավորիչ) կյանքն ու գործունեությունը առաջին հերթին կապված է եղել Հռոմի և նրա արևելյան նահանգ Կապադովկիայի հետ։ Տրդատը հոր՝ Խոսրովի սպանությունից հետո ապաստանել է Հունաստանում, ապա երիտասարդությունը անց է կացրել հռոմեացիների մոտ և ծառայել հռոմեական բանակում։ Գրիգոր Լուսավորիչը մանուկ հասակում տարվել է Կեսարիա, որտեղ և մկրտվել է, ապա Հայաստանում քրիստոնեությունը տարածելուց հետո այնտեղ ձեռնադրվել է եպիսկոպոս, հետո մեկնել Սեբաստիա։ Գրիգորը Կեսարիայում դաստիարակվելով և ուսում առնելով, իր օրենքների մեծ մասը Հայաստան բերեց Կեսարիայից ու Սեբաստիայից և բնական է, որ հայ եկեղեցու պաշտամունքի ու ազդեցության հիմքը պետք է Կապադովկիայի եկեղեցու ծեսը լիներ (Մ. Օրմանյան)։ Այս ամենը, անկասկած, իր անդրադարձումն է ունեցել հայկական առաջին եկեղեցիների ճարտարապետության վրա, որոնք հիմնել Գրիգոր Լուսավորիչը Կապադովկիայից վերադառնալիս։ Ըստ Ագաթանգեղոսի, Գրիգորը այդ ժամանակ հանդես եկավ և որպես ճարտարապետ։ Եվ դա միանգամայն օրինաչափ էր, որովհետև նրը նա հիմնադրում էր քրիստոնեական առաջին եկեղեցիները, «...Հայաստանի ճարտարապետներիդ ոչ մեկը դեռևս ծանոթ չէր նոր կրոնի եկեղեցու ո՛չ աշխարհագրական դողմերի վերաբերյալ նրա ունեցած դասավորությանը, ո՛չ ծիսական կարգին համապատասխան նրա բաժանմունքներին և ո՛չ էլ ընդհանուր տեսքին ... և բնական է, որ նա առաջին շենքի վերաբերյալ թեմենդիր մանրամասնությամբ պետք է ցուցումներ տար և անձամբ ղեկավարեր շինությունը, որովհետև այն օրինակ էր ծառայելու հետագա ծավալուն շինարարության համար» (Ս. Բարխուդարյան)։

Հայ եկեղեցու պատմության մեջ Կապադովկիան մեծ դեր է խաղացել նաև Գրիգոր Լուսավորչից հետո։ Նրան հաջորդող կաթողիկոս-պատրիարքներ Արիստակեսը և Վրթանեսը (Գրիգորի որդիները) ծնվել և դաստիարակվել են Կեսարիայում և հետագայում այնտեղ ձեռնադրվել, ընդ որում Արիստակեսը ինչպես Հայաստան տեղափոխվելը արդեն հոլովարական էր Կեսարիայում։ IV դարի հայ կաթողիկոսներից Հուսիկը ծնվել և մեծացել է Կեսարիայում, ապա այդտեղ ձեռնադրվել։ Կեսարիայում է սովորել և ձեռնադրվել նաև եպիսկոպոս Ներսես Պարթևը (հայկական եկեղեցին ավանդաբար դարձավ 372 թ., երբ կաթողիկոսները սկսեցին ձեռնադրվել Էջմիածնում)։

Հայ-կապադովկիական ճարտարապետական առնչությունները արտահայտվում են, առաջին հերթին, արտաքուստ շեշտված աբսիդով միանավ բազիլիկներում և «ազատ խաչ» տիպի գմբեթավոր կառույցներում։ Այս երկրորդ տիպի հայկական և կապադովկիական եկեղեցիների համեմատական վերլուծությունն առանձին ուսումնասիրության խնդիր է և այս թեմայի շրջանակներից դուրս է։

Կառուցվածքի ուղղանկյուն պատերի մեջ չպարփակված, դուրս եկող աբսիդով կոմպոզիցիան բնորոշ է հայկական միայն վաղ միջնադարի հուշարձաններին (բազիլիկ թե գմբեթավոր)։ Արտաքուստ շեշտված աբսիդով հայկական միանավ եկեղեցիների աբսիդների ճնշող մեծամասնությունը դրսից բազմանիստ է։ Արտաքուստ շրջանաձև աբսիդ ունեցող Բատիկյանի և Վերիշենի եկեղեցիները ուշ միջնադարում հիմնովին վերակառուցվել են և նրանց աբսիդների նախնական ձևը՝ բազմանիստ թե շրջանաձև, պարզ չէ։ Միայն Լուսակերտի միանավ եկեղեցին IV դարում ունեցել է դրսից շրջանաձև աբսիդ, որի ստորին շարքերի վրա, V դարում, վերակառուցման ժամանակ, բարձրացրել են յոթանիստ աբսիդի պատերը։ Մնացած բոլոր նույ-

նաև հայկական հուշարձանների աբսիդները դրսից հնգանիստ են (Էջմիածին, Ջարշարիս, Պեմզաշեն, Ջրվեժ, Շողակավանք, Վանաստան և այլն)։ Եկեղեցիներից մի քանիսը սկզբնապես ունեցել են փայտե ծածկ, որը դեռ վաղ միջնադարում՝ V—VI դդ. փոխարինվել է քարով (Լուսակերտ, Ոսկեվազ, Փարպի)։ Մյուս բոլոր եկեղեցիները նախապես քաղաքածակ են կառուցվել։

Ահա հայկական միանավ բազիլիկների այս ենթատիպը սերտորեն առնչվում է Կապադովկիայի նույնատիպ եկեղեցիների հետ, որոնք, ի տարբերություն արտաքուստ շրջանաձև աբսիդ և փայտե ծածկ ունեցող ասորական միանավ կառույցների, քաղաքածակ են, բազմանիստ աբսիդով (Անթեփե, Սարիգյոլ, Եդիկապալու, Վիրանշեհիր և այլն)։ Ընդհանուր են հայկական և կապադովկյան միանավ այս եկեղեցիների ինչպես հատակագծային և ծավալային համաչափությունները, շինարարական տեխնիկան, այնպես էլ հարդարանքի սկզբունքները։

Սակայն կան և տարբերություններ։ Այսպես, օրինակ, հայկական միանավ, արտաքուստ շեշտված աբսիդով եկեղեցիները որպես օրենք, աբսիդում ունեն մեկ լուսամուտ, իսկ ինտերիերը ջլատվում է պիլաստրներով և նրանց միջև ձգվող քաղաքիր կամարներով։ Մինչդեռ Կապադովկիայի նույնատիպ կառույցների աբսիդները լուսավորվում են երեք լուսամուտով, և չունեն քաղաքիր կամարներ (Մ. Ռեստլե)։

Բյուզանդական և հայկական ճարտարապետական կապերի և ազդեցությունների անուղղակի փաստեր են հանդիսանում հայկական եկեղեցիների վրա եղած հունարեն արձանագրությունները։ Դրանք շատ քիչ են։ Հայտնի են Էջմիածնի Մայր տաճարի հյուսիսային ճակատի (IV դար), Եբերույքի բազիլիկայի (V դար), Մաստարայի, Ավանի, Զվարթնոցի (VII դար) հունարեն արձանագրությունները։ Պատահական չէ, որ Եբերույքի բազիլիկայի արձանագրությունը համընկնում է Ասորիքում Դեյր Սիմանի եկեղեցու արձանագրության հետ ոչ միայն բովանդակությամբ (92-րդ Սաղմոսի 5-րդ երգը), այլև տողերի դասավորությամբ (Ֆ. Շելով-Կովեդյաև)։ Եբերույքի և Դեյր Սիմանի ճարտարապետական հայտնի զուգահեռները հաստատվում են նաև վիմագրական նյութով։ Ուշագրավ է նաև հունարեն արձանագրությունների առկայությունը Զվարթնոցում և Ավանում՝ նրանց հեղինակներ, կաթողիկոսներ Ներսեսը և Եզրը հայտնի են բյուզանդական կողմնորոշմամբ և քաղկեդոնիզմին հարելով։ Հայաստանում վաղ միջնադարյան հունարեն արձանագրությունների փոքրաթիվ ցանկը վերջերս ավելացավ ևս մեկով։ Բայբուրդի արտաքուստ հնգանիստ աբսիդով միանավ եկեղեցու շրջակայքի մաքրումից հայտնաբերվեց պրոֆիլավոր մի քար, որի կիսագլանիկի վրա կան փորագրված հունարեն «ΥΓΕΙΑ», («հիղեա») և «ΚΗΧΑΡΙC» («կեքսարիկ») բառերը («առողջություն» և «երանություն»)։ Հետաքրքրականն է, որ այս բառերը փորագրված են շրջված՝ հայելու անդրադարձումով, փաստորեն ծածկագիր են հանդիսանում։ Կարելի է ենթադրել, որ արձանագրության հեղինակը ցանկացել է թաքցնել իր ազգային պատկանելությունը, կամ Եզրի նման՝ իր կրոնական կողմնորոշումը և հունարեն բառերը փորագրել է ծածկագիր։

Բայբուրդի եկեղեցին ունի ճարտարապետական ուշագրավ առանձնահատկություններ։ Այն գտնվում է պատմական Այրարատի Ոստան Հայոց գավառում (Գառնիից հարավ-արևելք, Խոսրովի արգելանոցում)։ Եկեղեցին լրիվ պահպանել է իր տարածական-ծավալային կոմպոզիցիան, շինված է մաքուր տաշված բազալտե քարերից, կրաշաղախով։ Շարվածքի հորիզոնական կարանները մշակված են 45° եզրակոսներով՝ մի հնարք, որը հատուկ է Հայաստանի վաղ միջնադարի շինարարական տեխնիկային։ Դահլիճն ունի ձգված համաչափություններ (Ներսի չափերն են 3,95×8,25 մ)։ Հարավից բացվող միակ մուտքի բարավորին շրջանագծի մեջ ներգծված հավասարաթև խաչ է քանդակված։ Աբսիդի կամարը շեշտված պայտաձև է և մշակված է

բավական բարդ պրոֆիլով։ Կամարը նստում է բեմի երկու անկյունների իմպոստ-խոյակների վրա, որոնք ունեն միևնույն բուսական քանդակը՝ բավական խոր փորագրված։ Նրանք իրենց նկարվածքով և կատարման ձևով կրկնում են Տեկորի եկեղեցու (V դարի վերջ) արտաքին ճակատների որմնամույթերի խոյակները։ Սակայն խոյակներն ունեն մի բացառիկ մանրամասն՝ տերևների միջև քանդակված են մարդկային գլուխներ։ Նման անտիկ մի խոյակ պահվում է Ստամբուլի թանգարանում (այս տեղեկությունը ինձ հայտնեց դոկտոր Ժ. Մ. Թիերին)։ Քիլն իր պրոֆիլով նույնպես տարբերվում է վաղ միջնադարյան հայկական հուշարձանների քիվերից. վերջիններս IV—V դդ. մշակվել են ատամիկներով, իսկ VI—VII դդ.՝ պայտաձև կամարիկներով։ Բայբուրդում քիվը նուշիրտ է՝ կազմված տարբեր մեծության երկու կիսապլանիկից և սալիկից։ Կիսապլանիկով քիվի մի այլ օրինակ հանդիպում ենք Կարենիսի վանքի VI դարի միանավ եկեղեցում։

Բայբուրդի եկեղեցուն հնագույնում (բայց նույնպես վաղ միջնադարում) հարավից կցել են նույնատիպ մի երկրորդ եկեղեցի, որի պատերի ստորին մասը բացվեց պեղումներից հետո։ Միմյանց կից զույգ միանավ բազիլիկների այս օրինակը եզակի է այդ ժամանակաշրջանի հայկական ճարտարապետության համար։

Հայաստանի վաղ միջնադարի միանավ եկեղեցիների ուսումնասիրությունը, թեկուզ սահմանափակ, հուշարձանների միայն մեկ տիպի սահմաններում, լուսաբանում է վաղ քրիստոնեական արվեստի մի այնպիսի բարդ երևույթ, ինչպիսին տարբեր երկրների ճարտարապետական դպրոցների փոխազդեցություններն են։ Հայկական միանավ բազիլիկների ճարտարապետության մեջ տակա են առնչություններ տարբեր ստեղծագործական դպրոցների հետ՝ արտաքին սրահով ենթատիպում՝ ասորական, արտաքուստ շեշտված աբսիդով ենթատիպում՝ կապադովկյան, իսկ ներգծված աբսիդով միանավ եկեղեցիներն անմիջականորեն կապվում են նախաքրիստոնեական Հայաստանի ճարտարապետության հետ։ Դրա ապացույցն են հանդիսանում թե՛ մատենագրական տեղեկությունները, թե՛ վաղ քրիստոնեական հայկական բազիլիկ շենքերի ճարտարապետական առանձնահատկությունները։ V դարի հայ պատմիչները որոշակի նշում են, որ IV դարի սկզբին Հայաստանում ոչ բոլոր հեթանոսական տաճարները քանդվեցին, այլ մի մասը վերափոխվեց եկեղեցու (Փավստոս Բուզանդ)։ Իսկ տաճարներից շատերը քանդելուց հետո նրանց հիմքի վրա «նույն լայնությամբ ու երկարությամբ» կառուցում էին եկեղեցիներ (Զենոբ Գլակ)։ Հեթանոսական տաճարի հատակագիծը, այսպիսով, ունեցել է ուղղանկյուն-ընդերկայնական հորինվածք, որն էլ ընդունվել է նույն տեղում կառուցված եկեղեցու համար։ Հայաստանի հնագույն եկեղեցիների կոմպոզիցիան, ոչը բխել է հայ հեթանոսական ճարտարապետության մեջ տարածված ձևերից, եղել է բազիլիկ տիպի, արևելքից արևմուտք ձգված, երկթեք ծածկով, արևելյան կողմում պատերի մեջ ներառված աբսիդով ուղղանկյուն կառուցվածք, որի ծավալը բարձրացել է բազմաստիճան ստիլոբատի կամ ցոկոլի վրա։ Ց. Ստրժիգովսկին իրավացիորեն նշում է, որ հայկական «գլանաձև թաղով միանավ եկեղեցիները կարող են լինել տեղական ավանդույթների մեջ հասած ձևերը»։

Վաղ միջնադարում հայկական ճարտարապետության ինքնուրույնությունը սերտորեն կապված է հայկական եկեղեցու ինքնուրույնության հետ։ Ավտոկեֆալ դառնալով IV դարի 70-ական թթ., հայկական եկեղեցին 506 թ. մերժեց Քաղկեդոնի տիեզերական ժողովի դրույթները։ Այդ որոշումը, որը հաստատվեց 554 թ. Դվինի երկրորդ ժողովում, հանգեցրեց խզման Բյուզանդիայի և նրա եկեղեցու հետ։

Հայկական եկեղեցու ավտոխտոնությունը, իհարկե, մեքենայորեն և իսկույն չբերեց հայկական եկեղեցական ճարտարապետության ավտոխտոնության։ Սակայն եկեղեցական խզումը էական անդրադարձ ունեցավ Հայաս-

տանի ճարտարապետության վրա, դրական մեծ ազդեցություն թողնելով. VI դարի վերջում և VII դարում հայ ճարտարապետության զարգացման ընթացքում իսկական թռիչք տեղի ունեցավ, որը չգիտեր այդ ժամանակաշրջանում քրիստոնեական աշխարհի և ոչ մի ուրիշ երկիր (Ա. Յակոբսոն)։

АРМЯНО-ВИЗАНТИЙСКИЕ АРХИТЕКТУРНЫЕ СВЯЗИ В РАННЕМ СРЕДНЕВЕКОВЬЕ
(На примере однонефных базилик)

М. М. АСРАТЯН

Резюме

Исследуя армяно-византийские архитектурные связи, специалисты в основном рассматривали, помимо сирийских параллелей, только взаимосвязи с константинопольской архитектурной школой, не привлекая раннехристианское зодчество Каппадокии. Между тем в первую очередь необходимо изучать связи армянского строительного искусства с архитектурой этой соседней с Арменией страны, которые имеют более глубокую и древнюю религиозную и историческую основу, чем даже армяно-сирийские культурные и церковные отношения. Архитектурные связи с Каппадокией нагляднее всего проявляются в однонефных базиликах IV—VI вв. с выступающей снаружи абсидой — в обеих странах церкви этого типа имеют сходные композиции, строительную технику и конструкции. Косвенным доказательством армяно-византийских архитектурных связей являются греческие надписи на армянских церквах, к малочисленному списку которых прибавилась недавно обнаруженная надпись на однонефной церкви Байбурда (V в.), которая фактически является криптограммой, состоящей из слов «здоровье» и «благодать».